

**ՀՀ Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովեյանի շնորհավորանքի խոսքը ՀՀ Ազգային անվտանգության ծառայության աշխատողի օրվա առթիվ.**

- Ազգային անվտանգության ծառայության հարգարժան աշխատակիցներ, ջերմորեն շնորհավորում եմ ձեզ՝ մասնագիտական տոնի առթիվ, մաղթում միշտ խաղաղ, արդյունավետ, անվտանգ ու արգասաբեր ծառայություն, նորանոր հաջողություններ և ձեռքբերումներ անձնական կյանքում և աշխատանքում:

Ձեր մասնագիտական հմտության, ցուցաբերած արիության, կամքի եւ նվիրվածության շնորհիվ՝ մեր հայրենիքը հաջողությամբ դիմակայում է արտաքին ու ներքին մարտահրավերներին, ժամանակին կանխվում են պետության, անձի և հասարակության դեմ ուղղված հանցագործությունները, ապահովվում է մեր երկրի քաղաքական ու տնտեսական անվտանգությունը, հանրային կյանքի անխափան գործունեությունը:

Շնորհավորանքների հետ մեկտեղ, ցանկանում եմ շնորհակալական խոսք ուղղել Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժանմունքի աշխատակիցներին՝ Մարտունու համայնքապետարանի հետ մշտական ու համագործակցված աշխատանքի կազմակերպման համար:

**Լավագույն մաղթանքներով՝  
Հովհաննես Հովեյան**